

Բ. Բ. Ֆելլուրիան, Շ. Պ. Պողօնյան, Գ. Մ. Մորտերսոն

Ա.Ա.Պ.Դ.Ա.Պ.Ա.Հ.ՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Ա.ԲԵԼՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽIX ԴԱՐԻ ԲՐԱ

Բժշկագիտության դարզացման և առողջապահության կազմակերպման հարցերը Հայաստանում միշտ էլ կապված են եղել երկրի սոցբալանտասական ու բաղարական պարմանների հետ։ Բժշկագիտությունը մեծ վերելք է ապրել միջին դարերում։ Ասեղծվել են բժշկական դպրոցներ, կառուցվել են հիվանդանոցներ՝ հատկապես Կիլիկիայի հայկական պետությունում։ Երևաց գիտարժշկական գործունեությունն են ծավալել Միիմար Հերացին (XII դար), Գրիգորիաս (XIII դար) և Ամբրոզովաթ Ամասիացին (XV դար)։ Նրանք որոշակի աղղոցաթյուն թողեցին հայկական բժշկության հնատակ զարգացման վրա, սակայն, ցավուք, պէտք է նշել, որ XV դարից հետո հայ բժշկությունը Հայաստանում անկում ապրեց։ Բժշկագիտության և առողջապահության կազմակերպման պատմության մեջ նոր փուլ սկսվեց 1828 թ., երբ Մուրքմենչայի պայմանագրի համաձայն Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին։ Որքան էլ տարօրինակ թվա, բայց փաստն այն է, որ այդ ժամանակ Հայաստանում չկար բժշկական ոչ մի հիմնարկ (իսկ վաղ միջնադարում կային հիվանդանոցներ) և բժշկական բարձրագույն կրթությամբ որևէ մասնագիտ։ Սանիտարապառողջապահական տեսակետից երկրը գտնվում էր ծայրաստիճան անմիտիք գրության մեջ։ Մովք, աղբատությունը, երկրամասային և սուր վարակիչ հիվանդությունների համաճարակիները մարդկային բազմաթիվ կյանքներ էին տանում։ Մի շարք բնակավայրեր կանգնած էին խոպառ վերանալու սպառնալիքի առջե, քանի որ մահացությունը գերազանցում էր ծննդի ությանը։ Զափազանց ցածր էր աղքարնակշության սանիտարական կուլտուրայի մակարդակը, որն ավելի էր զժվարացնում առողջապահության կազմակերպման և առաջին հերթին վարակիչ հիվանդությունների գեմ կազմակերպվող պայքարի գործը։ Չափազանց մեծ էր հիվանդների ու հաշմանդամների թիվը, սակայն

* Զեկուցում՝ կարգացված բնագիտության և տեխնիկայի պատմության խորհրդի 1978 թ. Հոկտեմբերի ընդլայնված նիստում՝ նվիրված Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու 150-ամյակին։

ընակլության միայն աննշան մասն էր ստանում բժշկական օգնություն, այն էլ ինքնուս բժիշկների և ոսկրահարդարների կողմից, որոնց թիվը քսանից էլ պակաս էր: Դրանցից բացի, ըստ Շոպենի, Հայկական մարդում կար 239 «դալլաք», որոնք ոմանքն բազմաթիվ տղրուկներ և հիմնականում գրաղվում էին արյուն բաց թողնելով: Բուժման այդ եղանակը, որ կար Հայաստանում և վերցված էր միջնադարյան բժշկությունից, ձրբեմն կիրառվում էր առանց ցուցմունքները հաշվի առնելու, և դա վնասում էր հիվանդին, ավելի ծանրացնելով նրա վիճակը: Բժիշկների բացակայության պատճառով հիվանդներն օգտվում էին ժողովրդական բժշկության միջոցներից: Որոշ շրջաններում ազգաբնակչությունը լավ գիտեր տեղական բուսերի բուժիչ համարությունները և հաշողությամբ օգտվում էր դրանցից:

Հայկական մարդում շկային դեղատներ և տեղացի 13 «բժիշկները» (հեքիմներ) իրենք էին պատրաստում բոլոր անհրաժեշտ դեղերը: Հիվանդներին վիրարուժական օգնություն ցուց տալու և անհրաժեշտ միջամտություններ կատարելու համար հաճախ շկային վիրահատության նույնիսկ տարրական գործիքներ*: Մեզ տեղեկություններ են հասել, որ տեղացի հայ բժիշկները որոշ հիվանդություններ այնքան հաջող են բուժել, որ նրանց ծառայությունից օգտվել են նույնիսկ ոռուսական բանակի պաշտոնյաները, չնայած բանակի կազմում եղել են դիպլոմավոր զինվորական բժիշկներ: Հատկապես լավ են բուժել ճիճվային հիվանդությունները, արտաքին խոցերն ու վերքերը, ինչպես նաև որոշ համաձարակային հիվանդություններ: Մեծ համբավ են վայելել բժիշկներ Գևորգ Տեր-Կարապետյանը և Հովհաննես Բաղրամյանը, որոնք, ճիշտ է, շեն ունեցել մասնագիտական կրթություն, սակայն հմտացած են եղել Հայաստանում տարածված հիվանդությունների բուժման գործում: Ժանտախտի ժամանակ հիվանդներին բուժելու իր համարձակությամբ ականատեսներին զարմանք ու հիացմունք է պատճառել Գ. Տեր-Կարապետյանը: Նա անվախ կերպով հեռացրել է վարակվածների բուրունների թարախը, նախօրոք կատարելով համապատասխան կտրվածքներ, որով և անխուսափելի մահից փրկել է հիվանդներին: Հայ անվանի բժիշկ Գևորգ Երեանցին XIX դարի սկզբներին կատարել է հետերոպալաստիկ վիրահատություն, ազդրոսկրի կտրվածքի ժամանակ, որպես տրանս-

* Հայտնի նկարիչ ու հնագետ Ռոբերտ Պորտերը իր հանապարհորդության ժամանակ անցնելով Հայաստանով, տեղացի հայ բժիշկներից մեկին նվիրում է լանցեստ: Վերջինիս ուրախությունը անսահման է լինում. Նա պատմում է, որ 15 տարի առաջ ինքը այցպիսի գործիք տեսել է մի անցորդ եվրոպացու մոտ և դրանից հետո փնտրել ու հարցրել բոլոր հանապարհորդներին, բայց ապարդյուն: Տե՛ս Լ. Ա. Օգանեսյան. История медицины в Армении, т. 5, Ереван, 1947, էջ 20.

պլանատատ օդապարթելով շան ազգրուկքը Այն ժամանակի Համար և Հայաստանի պայմաններում այդ վիրահատությունը բացափկ մի երեսով լին էր Բավական է ասել, որ նույնիսկ ամենազարգացած երկրներում 40 տարի անց միայն սկսեցին կառարել այլպիսի վիրահատությունն

Չնայած բժիշկության, հասկապիս վիրաբաւժում բնագավառում տակա որու հացադրություններին, առողջապահության կազմակերպման բնադրավառում կային լուրջ թերություններ, կապված ինչպիս դիպլոմավոր բժիշկների, անդեւ էլ բժշկական հիմնարկների լիակատար բացակայության հետ Զերք պետականորեն կազմակերպված առողջապահությունն

1828—30 թթ. բուկվեցին ժանտախտն ու խոլերան Ռանակի հետ Հայաստան եկած ուստի զինվորական բժիշկներն էին, որ ստանձնեցին Համաճարակիների դեմ պայքարի նախաճնունությունը Դեկտ. 1827 թ. գործանը, երբ նախապատրաստվում էր սուսական բանակի արշավանքը դեպի Երևան, սուսպիլում է զորամասների առողջապահության պահպահման կոմիտեի Փաստորեն այդ կոմիտեի անդամներն էլ Հայկական մարզում սուսների կողմից աղքարնակչության առողջապահության առաջին կազմակերպիչները դարձան: Առողջապահության կազմակերպման և համաճարակների դեմ պայքարի միջոցառումների հարցերը զրվեցին առաջին պլանի վրա: 1829 թ. սուսական բանակի բժիշկ Շումելին անմիջական զեկավարությամբ, Հայաստանի պատմության մեջ առաջին անդամ Երևանում կազմակերպվում է Հակաժանտախտային կոմիտե, որը մշակում և ձեռնարկում է զիտականորեն հիմնավորված մի շարք միջոցառումների Որոշ ժամանակ անց նշան կոմիտեներ են ստեղծվում նաև Հայկական մարզի այլ քաղաքներում: Ժանտախտի գեմ պայքարի վերաբերյալ զրվում է հատուկ ըրահանգ, թարգմանվում Հայերեն և տարածվում ժողովրդի մեջ: Ռուս բժիշկները պայքարում էին նաև Հոգևորականների դեմ, որներ խանգարում էին առողջապահական միջոցառումների կենսագործմանն ու դրանով իսկ փաստորեն նպաստում Համաճարակների տարածմանը: Համաճարակների դու դարձան դին լուրջ բժիշկներ Շումելի, Դեմակալոմիշը և Լիսիցինը: Հայկական մարզի միակ բժշկական հիմնարկները ուսուսական բանակի զինվորական հոսպիտալներն էին, որոնցից առաջինը Երևանի հոսպիտալն էր: Որոշ թվով մահճակարներ նախատեսված էին ազգաբնակչությանը անհետաձգելի բժշկական օգնություն ցույց տալու համար:

Առողջապահության կազմակերպման բնագավառում առաջին քայլակ այն, որ 30-ական թվականների սկզբին Հայկական մարդին տրվեցին մարզային և քաղաքային բժշկների հաստիքներ: Քաղաքա-

ցին բժիշկ նշանակվեց Գևորգ Տեր-Կարապետյանը, իսկ մարզային բժիշկ՝ Սիմոն Լոռու-Մելիքյանը, որը Հայաստանի առաջին դիմումավոր հայ բժիշկն էր Պետերբուրգից գալով Երևան և ծանոթանալով իրադրությանը, նամակով խնդրում է Հորը բժշկական գործիքներ ուղարկել և ուս բժիշկների աշխատությունները։ Սիմոն Լոռու-Մելիքյանը ձեռամուխ է լինում առողջապահության աշխատանքներին և մարզում առաջին անգամ անց է կացնում բնական ծաղկի դեմ պատվաստում։ Հայկական մարզը Երևանյան նահանգի վերափոխվելուց հետո ստեղծվում է նահանգային բժշկական վարչություն, իսկ գավառներում՝ գավառային վարչություններ, որոնք նահանգային բժշկական վարչության մարմիններն էին։ Երևանի նահանգային վարչությունը ուներ նահանգային բժիշկ՝ իր օգնականով, քաղաքացին բժիշկ ու մանկաբարձուհի, իսկ գավառային վարչությունները ունեին գավառային բժիշկ, մանկաբարձուհի և 2 բուժակի Փաստորեն նախկին 2 բժշկի փոխարեն բժիշկների թիվը հասավ 11-ի։ Այս հանգամանքը, անկասկած, օգնեց առողջապահության կազմակերպման և ազգաբնակչության բժշկական որակացալ օգնության աշխատանքները գնել ամուր հիմքերի վրա։ Դավանեցում երևացին առաջին դիմումավոր բժիշկները և մանկաբարձուհիները։ Սաղիկ հիմանդրության դեմ պայքարի կազմակերպման նպատակով 1856 թ. ստեղծվում է նահանգային հատուկ կոմիտե։ 1857 թ. գեղատում է բացվում Երևանում, իսկ 1870 թ.՝ Ալեքսանդրապոլում։ Հիմանդրանուները գենես շիացին, և հիմանդրին մի մասը, ինչպես ասվեց, ստացիոնար բժշկական օգնություն էր ստանում զինվորական հոսպիտալներում։ Վերջիններիս թիվն ավելացել էր ի հաշիվ 3 ժամանակավոր հոսպիտալների՝ Ալեքսանդրապոլի, Զալալ-Օղլիի և Ախտայի։ Երևանի հոսպիտալում աշխատում էր 4, Նախիջևանում՝ 2, Զալալօղլիում՝ 4, Ալեքսանդրապոլում՝ 2 և Ախտայում՝ 1 բժիշկ։

80-ական թվականներին որոշակի բարեկավում է մտցվում զյուղական բժշկական օգնության կազմակերպման բնագավառում։ 1877—78 թթ. ուսու-թուրքական պատերազմից հետո Ռուսաստանի կազմի մեջ մտած Ղարսի մարզում ևս առողջապահության կազմակերպման բնագավառում է աշխատացում։ Ստեղծվում է մարզային բժշկական վարչություն։ Ղարսում սկսում են աշխատել մարզային և քաղաքային բժիշկներ և մանկաբարձուհի, իսկ Կաղղվանի, Արդահանի և Օլթիի օկրուպներում՝ մեկական բժիշկ։ Արգեն 90-ական թվականներին Ղարսի մարզում ևս գործում էր զինվորական հոսպիտալը, իսկ Օրբուրադում, Ախտայում և Դիլիջանում՝ մեկական լազարեթ, որոնք սահմանափակ չափով սպասարկում էին նաև քաղաքացիական բնակչությանը։ Դյուզաշական առողջապահության կազմակերպումը սրոշակիորեն բարելավեց

1884 թ. փետրվարի 27-ի Հրահանգի իրավործումից հետո Այդ Հրահանգի համաձայն լուրաքանչյուր գավառում ստեղծվեց զյուղական բժշկական բնույնարան, որը բազկացած էր ամրութապիտիալից և 4 մահմակալանոց ստացիսնարից: Նրանց կից կար նաև փեղատուն Ստացիսնարը հիվանդներին ցույց էր տալիս միայն առաջին օդիություն, ովհավորական վիրարաւծական հիվանդներին Բնույնարանների աշխատանքը և զյուղական վայրերում առողջապահության կազմակերպման հարցերը հոկոզության տակ պահելու համար արվում է նաև նահանգային բժշկի զյուղական բժշկական մասի տեղակալի հաստիք: Հայաստանում առաջին ընդունարանը հիմնադրվում է 1884 թ. Դամարլու գյուղում, այնուհետեւ՝ Բաշ-Նորաշենում, Աշաբարակում, Մեծ Ղարաբիլիսայում, Ներքին Ախտայում և այլուր: Մինչև 1888 թ. Երեանում, եթե Հաշվենք գինվորական հոսպիտալն ու դեղատունը, չի եղել բժշկական ոչ մի հիմնարկություն: 1888 թ. Երեանի բաղաբային ինքնավարության կողմից հիմնադրվում է բուժարան, որն ուներ վարիչ, բժիշկ, բուժակ և մանկաբարձունի: 1893 թ. բուժարանին կից ստեղծվում է 12 մահմակալանոց հիվանդանոց: Հետագայում մահմակալների թիվը առաջնանարը աճում է, հասնելով 40-ի: Սկզբում հիվանդանոցն ուներ թերապևտիկ և վիրարուծական բաժանմունքներ, այնուհետեւ առանձնացվում է 5 մահմակալ վեներական հիվանդների համար: Այդ ամենը հարավորություն տվեցին ավելի սացիսնալ կերպով լուծելու առողջապահության կազմակերպման հարցերը:

Հայաստանում առողջապահության կազմակերպման և աղդաբնակալությանը բժշկական օգնություն ցույց տալու գործում չափազանց մեծ է ուս բժիշկների գերբուժավական է նշել, որ 1890 թ. նահանգում աշխատող 15 բժիշկներից միայն 4-ն էին հայ, իսկ 8 մանկաբարձուները բոլորն էլ ուս էին:

1905 թ. զյուղական առողջապահության կազմակերպման բնագավառում տեղի են ունենում լուրջ վերափոխումներ: լուրաքանչյուր գավառ բաժանվում է բժշկական երկու տեղամասի: Տեղամասերում հիմնադրվում է մենական հիվանդանոց՝ 6 մահմակալով, ընդ որում՝ հիվանդներին ընդունում են ոչ միայն առաջնային բժշկական օգնություն ցույց տալու, այլև ստացիսնար բուժման համար: Հիվանդանոց շենքն ընդունում միայն վարակիչ, հոգեկան և խրոնիկ հիվանդներին: Այդ հիվանդանոցները ունեին բուժօգնության կազմակերպման համար ավելի լավ հարմարություններ, քան ընդունարանները: Հիվանդանոցից բացի, յուրաքանչյուր բժշկական տեղամասում ստեղծվում է նաև մենական բուժակային կետ, որտեղ բուժակը հիվանդներին ցույց էր տալիս բը-բըշկական օգնություն: 1910 թվականին գյուղական առողջապահության

կազմակերպման բնագավառի վերափոխումներից հետո գործում էին 14 գյուղական հիվանդանոց ու նույնքան էլ բուժակային կետ: Հիվանդանոցների և մահճականների թվի աճին զուգընթաց կազմակերպվում է նաև մասնագիտացված բուժօգնություն վիրարուժության, մանկաբարձության, ակնաբուժության, հոգեբուժության և այլ մասնագիտությունների բնագավառում:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, 1913 թ., Ֆրիանյան նահանգում կար 53 բժիշկ (31-ը աշխատում էր քաղաքներում, 22-ը՝ գյուղական վայրերում), 80 բուժակ, 37 մանկաբարձության, 19 դեղատուն, այդ թվում՝ 7-ը՝ քաղաքներում, 12-ը՝ գյուղական վայրերում:

Ինչպես ցույց են տալիս փաստերը: Ուսւաստանի կաղմի մեջ մտնելը առաջադիմական նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանում առողջապահության կազմակերպման և բժշկագիտության զարգացման համար:

Ա. Խ. ԳԵՎՈՐՔՅԱՆ, Շ. Պ. ՊԱՊՈՅԱՆ, Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ЗДРАВООХРАНЕНИЕ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В XIX ВЕКЕ

Резюме

При вхождении Восточной Армении в состав России не было ни одного дипломированного врача и медицинского учреждения.

Больным медицинскую помощь оказывали врачи—самоучки. Первым медицинским учреждением в восточной Армении был военный госпиталь в г. Ереване, в котором были отведены койки для оказания неотложной помощи населению.

В 1829 г. в Ереване организуется противочумный комитет, который разрабатывает и претворяет в жизнь ряд мероприятий. В 1856 г. создается губернский комитет по борьбе с оспой, а через год открывается первая аптека в Ереване. В 1884 г. в Камарлу открывается приемный покой, а в 1888 г. в Ереване и в 1895 г. в Караклисе—лечебницы. Постепенно растет число больничных коек, улучшается медицинская помощь населению.

Накануне I мировой войны в Армении уже работали 53 врача, 80 фельдшеров и 37 акушерок. Вхождение Восточной Армении в состав России имело огромное прогрессивное значение для развития здравоохранения и медицинских наук.